ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 23-Ն 17.12. 2012թ.

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2013թ. ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Բուրաստան համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը 2013թ. համար՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

1. _____ / Ռուդիկ Առաքելյան/
2. _____ /Գրիգոր Թարվերդյան/
3. _____ /Ալբերտ Հովհաննիսյան/
4. _____ / Սերգո Ղազարյանը/
5. _____ / Մարտին Մանասերյան/
6. _____ / Կարապետ Ամրազյան/

Կ. Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/
/ստորագրություն /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 24-Ա **17.12. 2012թ.**

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 2013Թ. ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 8, 26 կետերի, 32 հոդվածի 5 կետի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել 2013 թ. համար Բուրաստան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Հաստատել 2013թ. համար «Բուրաստանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Ավագանու անդամներ՝

1. _____ / Ռուդիկ Առաքելյան/
2. _____ /Գրիգոր Թարվերդյան/
3. _____ /Ալբերտ Հովհաննիսյան/
4. _____ / Սերգո Ղազարյանը/
5. _____ / Մարտին Մանասերյան/
6. _____ / Կարապետ Ամրազյան/

Կ. Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/

/ստորագրություն /

Հավելված թիվ 1
Բուրաստան համայնքի ավագանու
17.12.2012թ. թիվ 24-Ա որոշման

ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2. Աշխատակիցների թվաքանակը՝ 14 /2013թ/
3. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	2013 Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		173000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	109000
Ծառայության պաշտոններ		
Համայնքային		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	109000
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	103000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/	1	92000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	86000
Քաղաքացիական աշխատանք		
Մշակույթի տան տնօրեն	1	57000
Գեղմասվար	1	48000
Գրադարանավար	1	51000
Սպորտ կազմակերպիչ	1	51000
Տեխսպասարկման անձնակազմ		
Օպերատոր	1	80000
Գործավար	1	63000
Պահակ	1	48000
Հավաքարար	1	48000
ԸՆԴԱՄԵՆԸ	14	1118000

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ /Է. ՂԱԶԱՐՅԱՆ/

Հավելված թիվ 2
Բուրաստան համայնքի ավագանու
17.12.2012թ. թիվ 24-Ա որոշման

<<ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. *Աշխատակիցների թվաքանակը՝ 3 /2013թ/*
2. *Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.*

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	*ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ*	*2013Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/*
Տնօրեն	*1*	*92000*
Դաստիարակ	*1*	*80000*
Պահակ	*1*	*48000*
ԸՆԴԱՄԵՆԸ	*3*	*220000*

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ /Է. ՂԱԶԱՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 25-Ա 17.12. 2012թ.

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻՑ «ՋՐԱՀԱՐՍ» ԱԿ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20 կետի դրույթներով և հիմք ընդունելով «Ջրահարս» ԱԿ-ի տնօրեն Վանուշ Դավթյանի դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Բուրաստան համայնքի մշակույթի տան շենքից 26.68քմ ընդհանուր տարածքով վարձակալական հիմունքներով հատկացնել «Ջրահարս» ԱԿ-ին, գործունեության ոլորտը տաքսի ծառայություն, ամսեկան 15000 / տասնհինգ հազար/ դրամ վարձավճարով:

Վարձավճարի մեջ ներառված է նաև նշված տարածքի էլեկտրաէներգիայի ծախսը:

2. Վարձակալության պայմանագրի ժամկետը սահմանել վեց ամիս:

Ավագանու անդամներ՝

1. _____ / Ռուդիկ Առաքելյան/
2. _____ /Գրիգոր Թարվերդյան/
3. _____ /Ալբերտ Հովհաննիսյան/
4. _____ / Սերգո Ղազարյանը/
5. _____ / Մարտին Մանասերյան/
6. _____ / Կարապետ Ամրազյան/

Կ. Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/
/ստորագրություն /

Հավելված թիվ
Բուրաստան համայնքի ավագանու
17.12.2012թ. թիվ 23-Ն որոշման

2013Թ. ՀԱՄԱՐ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի- շինությունների /ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

<u>Հիմնական օբյեկտների համար՝</u>

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ) սույն կետի՝ ա)ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ ,

բբ) 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

բգ) 1001քմ և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35500 /երեսունհինգ հազար / դրամ:

<u>Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝</u>

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ,

դ) 20քմ և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար /, եթե սահմանված կարգով հաստատված ճարատարապետաշիանարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 / մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ) բացի օբեյեկտի վերակառուցման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության

փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով,

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա / շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմաները:

3. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

1,2,3 կետերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 / հինգ հազար / դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 / հինգ հազար / դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքնչյուր օրվա համար 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ,

բ) հեղուկ վառելիքի, սեխմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50000 / հիսուն հազար/ դրամ,

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ,

գ) բաղնիքների /սաունաների/ համար՝ 500000/հինգ հարյուր հազար / դրամ,

դ) խաղատների կազմակերպման համար՝ 1000000 /մեկ միլոն/ դրամ,

ե) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 500000/ հինգ հարյուր հազար / դրամ,

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 / մեկ հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսի / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 / հինգ հազար / դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ –ի տեղադրման տուրքը սահմանվում է՝

ա) այլ արտաքին գովազդի համար՝ 1000/ մեկ հազար/ դրամ,

բ) համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակի համար՝ 700/յոթ հարյուր/ դրամ:

2. Տեղական վճարների դրույքչափերը

Տեղական վճարների դրույքչափերը սահմանվում են՝

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված՝ տեխնիկա – տնտեսական պայմաններ մշակելու, հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց՝ հատուցման վճար՝ 5000/ հինգ հազար/ դրամ,

բ) համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ եղած հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 / մեկ հազար/ դրամ,

գ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 1000 / մեկ հազար / դրամ:

դ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր շնչի համար ամսեկան 10 /տաս/ դրամ:

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ /Է. ՂԱԶԱՐՅԱՆ/